ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 104-Ն

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 201 թվականի դեկտեմբերի 12 -ի N 78-Ն որոշումը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 12-ի <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի 2016 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N 78-Ն որոշման մեջ կատարել հետևյալ վերաբաշխումները՝

1) 08.2.4.51 / այլ մշակութային կազմակերպություններ/ ծրագրի 4239/ ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/ հոդվածի <<1430.0>> թիվը փոխարինել <<1395.0> թվով:

2) 08.2.4.51/ այլ մշակութային կազմակերպություններ/ ծրագրի 4727 /մշակութային նպաստներ/ հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<35.0>> թվով:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

2017թ. հոկտեմբերի 6
գ.Լեռնանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 105-Ա

ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՐԻ ԽՄԲԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՓԱՌԱՏՈՆԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 24 -րդ կետով , 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 46 -րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով և հիմք ընդունելով Լեռնանիստ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 12-ի N 79-Ն որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 08.2.4.51 /այլ մշակութային կազմակերպություններ/ ծրագրի 4727 /մշակութային նպաստներ/ հոդվածից 35.0 / երեսունհինգ հազար/ դրամ տրամադրել Լեռնանիստի պարի խմբի երեխաներին, 2017 թվականի հոկտեմբերի 7-ին Երևանում կայանալիք փառատոնին մասնակցելու համար:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

20 17թ. հոկտեմբերի 6
գ.Լեռնանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Լեռնանիստ համայնք, 1փ. 52 շենք ,հեռ. 094-55-33-04
էլ փոստ- lernanist1828@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«06» հոկտեմբերի 2017 թվականի N 106-Ա

ԳՈՒՄԱՐ ԳԱՆՁԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Լեռնանիստ համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի 13-րդ փողոցի 8-րդ տան բնակիչ Նազիկ Բախշիկի Օհանյանը հանդիսանալով անշարժ գույքի սեփականատեր, հանդիսանում է տվյալ անշարժ գույքի համար օրենքով նախատեսված հարկի /հողի հարկ, գույքահարկ/ վճարող սուբյեկտ, սակայն, խախտելով <<Հարկերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը, ժամանակին չի կատարել օրենքով իր վրա դրված հարկը վճարելու պարտավորությունը:

Ըստ հարկման բազայում առկա տվյալների՝ Նազիկ Բախշիկի Օհանյանը հանդիսանում է Լեռնանիստ համայնքում գտնվող 5 միավոր անշարժ գույքի սեփականատեր:

Ըստ հարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի՝ 06.10.2017թ. դրությամբ Լեռնանիստ համայնքի բյուջեի նկատմամբ վերջինիս վճարման ենթակա պարտքը կազմում է ընդհանուր 271 500 ՀՀ դրամ, որից ապառք՝ 182 408 ՀՀ դրամ, տույժ՝ 89 092 ՀՀ դրամ:

Հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2017 թվականի հոկտեմբերի 6-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ:

Քաղաքացին պատշաճ կերպով ծանուցվել է /հիմք փոստային անդորրագիր/, սակայն չի ներկայացել վարչական վարույթի լսումներին:

Համաձայն <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

Ղեկավարվելով վերոգրյալի պահանջներով, հիմք ընդունելով <<Հարկերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 22, 29.1 հոդվածները

ՈՐՈՇԵՑԻ

1. Քաղաքացի Նազիկ Բախշիկի Օհանյանից հօգուտ Լեռնանիստ համայնքի բյուջե գանձել 199 000 ՀՀ դրամ, որը կազմում է 4 միավոր հողատարածքների հողի հարկի 2008 -2016 թթ. պարտքի ընդհանուր գումարը, որից՝

հողի հարկի գծով ապառք՝ 125 644 ՀՀ դրամ, տույժ՝ 73 356 ՀՀ դրամ,

Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

2. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

3. Գանձված գումարը ենթակա է վճարման հողի հարկի դեպքում՝ 900125008046 հաշվեհամարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Լեռնանիստ համայնք, 1փ. 52 շենք, հեռ. 094-55-33-04
էլ փոստ- lernanist1828@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«06» հոկտեմբերի 2017 թվականի N 107-Ա

ԳՈՒՄԱՐ ԳԱՆՁԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Լեռնանիստ համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի 5-րդ թաղամաս թիվ 52 հասցեում հաշվառված Ռուբիկ Դրոյի Ստեփանյանը հանդիսանալով անշարժ գույքի սեփականատեր, հանդիսանում է տվյալ անշարժ գույքի համար օրենքով նախատեսված հարկի /հողի հարկ / վճարող սուբյեկտ, սակայն, խախտելով <<Հարկերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը, ժամանակին չի կատարել օրենքով իր վրա դրված հարկը վճարելու պարտավորությունը:

Ըստ հարկման բազայում առկա տվյալների՝ Ռուբիկ Դրոյի Ստեփանյանը հանդիսանում է Լեռնանիստ համայնքում գտնվող 8 միավոր անշարժ գույքի սեփականատեր:

Ըստ հարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի՝ 06.10.2017թ. դրությամբ Լեռնանիստ համայնքի բյուջեի նկատմամբ վերջինիս վճարման ենթակա պարտքը կազմում է ընդհանուր 217 818 ՀՀ դրամ, որից ապառք՝ 147 630 ՀՀ դրամ, տույժ՝ 70 188 ՀՀ դրամ:

Հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2017 թվականի հոկտեմբերի 6-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ:

Քաղաքացին պատշաճ կերպով ծանուցվել է /հիմք փոստային անդորրագիր/, սակայն չի ներկայացել վարչական վարույթի լսումներին:

Համաձայն <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

Ղեկավարվելով վերոգրյալի պահանջներով, հիմք ընդունելով <<Հարկերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 22, 29.1 հոդվածները

ՈՐՈՇԵՑԻ

1. Քաղաքացի Ռուբիկ Դրոյի Ստեփանյանից հօգուտ Լեռնանիստ համայնքի բյուջե գանձել 197 240 ՀՀ դրամ, որը կազմում է 7 միավոր հողատարածքների հողի հարկի 2008 -2016 թթ. պարտքի ընդհանուր գումարը, որից՝

հողի հարկի գծով ապառք՝ 128 927 ՀՀ դրամ, տույժ՝ 68 313 ՀՀ դրամ,

Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

2. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

3. Գանձված գումարը ենթակա է վճարման հողի հարկի դեպքում՝ 900125008046 հաշվեհամարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 108-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հնրապետության Կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-ն որոշմամբ, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Թույլատրել Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի բնակիչներ՝ Զեփյուռ Հարությունյանին, Արա Վարդանյանին, Գագիկ Գրիգորյանին, Գագիկ Ալոյանին, Անի Սարգսյանին, Արմիկ Գյուրջյանին , Նունե Բարեղամյանին , Սուսաննա Խաչատրյանին և Մարգպետ Նիկողոսյանին իրենց սեփական հասարակական առևտրի տաղավարում 2017 թվականի չորրորդ եռամսյակում ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի իրացում կազմակերպելու համար:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

20 17 թ. հոկտեմբերի 9
գ.Լեռնանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 109-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հնրապետության Կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-ն որոշմամբ, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Թույլատրել Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի բնակիչ՝ Ռուզաննա Հարությունյանին իր սեփական հասարակական առևտրի տաղավարում 2017 թվականի չորրորդ եռամսյակում ոգելից խմիչքների վաճառքի իրացում կազմակերպելու համար:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

2017 թ. հոկտեմբերի 9
գ.Լեռնանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 110- Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի N 2 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ղեկավարի 2007 թվականի հունվարի 15-ի <<Համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին>> N 2 որոշման N 4 հավելվածում կատարել լրացում, որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ , համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

2017 թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12
գ.Լեռնանիստ

Հավելված N 4
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Լեռնանիստի գյուղական համայնքի ղեկավարի
/հին/ 2007թ-ի հունվարի 15-ի N 2 որոշման
/փոփ./ 2014թ-ի սեպտեմբերի 26-ի N 102-Ա որոշման
/փոփ./ 2016թ-ի փետրվարի 11-ի N 14-Ա որոշման
/փոփ./ 2017թ-ի հոկտեմբերի 12-ի N 110-Ա որոշման

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏԻ

3.2-1
(ծածկագիրը)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստի համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) առաջին կարգի մասնագետի պաշտոնն ընդգրկվում է համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի երկրորդ ենթախմբում:

2. առաջին կարգի մասնագետին «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված կարգով պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է աշխատակազմի քարտուղարը (այսուհետ՝ քարտուղար):

2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3. առաջին կարգի մասնագետը անմիջականորեն ենթակա և հաշվետու է քարտուղարին:

4. առաջին կարգի մասնագետն իրեն ենթակա աշխատողներ չունի:

5. առաջին կարգի մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է առաջատար մասնագետը՝ քարտուղարի հայեցողությամբ:

Օրենքով նախատեսված դեպքերում առաջին կարգի մասնագետը փոխարինում է համայնքային ծառայության կադրերի ռեգերվում գտնվող՝ սույն պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող անձը, իսկ դրա անհնարինության դեպքում այլ անձը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

առաջին կարգի մասնագետը աշխատակազմի գլխավոր մասնագետի կամ աշխատակազմի այլ առաջատար մասնագետի բացակայության դեպքում փոխարինում է նրանց՝ քարտուղարի հայեցողությամբ:

6. առաջին կարգի մասնագետը՝

ա) աշխատանքների կազմակերպման, ծրագրման, համակարգման, ղեկավարման և վերահսկման լիազորություններ չունի.

բ) կատարում է քարտուղարի հանձնարարականները.

գ) պատասխանատվություն է կրում օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, լիազորությունները վերազանցելու համար:

3. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. առաջին կարգի մասնագետը մասնակցում է հիմնախնդիրների լուծմանը, որոշումների ընդունմանը և հանձնարարականների կատարմանը:

4. ՇՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

8. առաջին կարգի մասնագետը՝

ա) աշխատակազմի ներսում շփվում է իր լիազորությունների շրջանակներում՝ աշխատակազմի աշխատողների և պաշտոնատար անձանց հետ.

բ) աշխատակազմից դուրս շփվում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ.

գ) աշխատակազմից դուրս որպես ներկայացուցիչ հանդես գալու լիազորություններ չունի:

5. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

9. առաջին կարգի մասնագետը, աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ, մասնակցում է դրված գործառույթներից բխող խնդիրների լուծմանը և գնահատմանը:

Առաջին կարգի մասնագետը գործառույթներից բխող բարդ խնդիրների բացահայտմանը, դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներին մասնակցելու լիազորություններ չունի:

6. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. առաջին կարգի մասնագետը՝

ա) ունի առնվազն միջնակարգ կրթություն.

բ) ունի «Համայնքային ծառայության մասին»,«Հանրային ծառայության մասին»,«Տեղական ինքնակառավարման մասին» ,«Զինապարտության մասին», Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

գ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

դ) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն

7. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. առաջին կարգի մասնագետը՝

ա) կատարում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով.

բ) ապահովում է փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը.

գ)հետևում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարականների, համապատասխան ժամկետներում, կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է աշխատակազմի քարտուղարին.

դ) աջակցում է զորակոչին ,զորահավաքներին,ուսումնավարժական հավաքներին.

ե/ աջակցում է քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեությանը.

զ/ աջակցում է բնակչության, հատկապես երիտասարդության, ռազմահայրենասիրական դաստիարակությանը;

է) իր լիազորությունների սահմաններում, անհրաժեշտության դեպքում, նախապատրաստում և աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում է իր աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.

ը) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.

1/ Մասնակցում է համայնքի զինապարտների գրանցամատյանի օրենքով սահմանված կարգով վարման աշխատանքներին, նախապատրաստում և աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում առաջարկություն զինապարտների վերաբերյալ ցուցակները, ինչպես նաև ըստ բնակության վայրի հաշվառումից հանվելու, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու վերաբերյալ տվյալները տարածքային զինվորական կոմիսարիատ ներկայացնելու համար :

2/ իր իրավասության սահմաններում մասնակցում է զորակոչի, զորահավաքի ու վարժական հավաքների կազմակերպման աշխատանքներին.

3/ իրենց պարտականությունները խախտած զինապարտ քաղաքացիների վերաբերյալ տեղեկություններ ունենալու դեպքում այդ մասին անհապաղ տեղեկացնում է աշխատակազմի քարտուղարին.

4/ իր իրավասության սահմաններում մասնակցում է նախազորակոչային, զորակոչային տարիքի անձանց և պահեստազորայինների զինվորական հաշվառման բնագավառում ՀՀ օրենսդրությամբ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց վերապահված լիազորությունների իրականացման աշխատանքներին.

5/ իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից գործող հանձնաժողովին վերապահված լիազորություններ

6/ աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ ուսումնասիրում է դիմումներում և բողոքներում բարձրացված հարցերը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում նախապատրաստում պատասխան.

7/ Հսկողություն է իրականացնում ընդհանուր օգտագործման տարածքներում բարեկարգման կանոնների պահպանմանը, կանաչ գոտիների պահպանությանը, աղբահանության աշխատանքները ժամանակին կազմակերպմանը, չսահմանված վայրում աղբի թափման, աղբահանության համար անհրաժեշտ պայմանների ապահովմանը և առաջարկություններ է ներկայացնում համայնքի ղեկավարին, խախտումներ թույլ տված իրավաբանական և ֆիզիկական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու

8/ իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

առաջին կարգի մասնագետը ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

8. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ

12. Առաջին կարգի մասնագետին օրենքով սահմանված կարգով շնորհվում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 2-րդ դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան: